

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

Տակուց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԵՎ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՝ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույյկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար: Ուշադիր եղիր պատասխանների ձևաբույրը լրացնելիս:

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարրերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ք X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ք X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում միևնույն (փակագծերում նշված) տառը:

- 1) գեղար-, հագուր-, հար-աշաղախ, ան-ր-վելի (η)
- 2) նավակատի-, ծե-ծե-ուն, լայնափող-, քողտի- (ρ)
- 3) փո-կապ, տա-տկալի, հա-ճապակի, կա-կանձել (η)
- 4) հինավուր-, հանդիպակա-, մոլու-ք, անդամալույ- (g)

2 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով:

- 1) մրցույթ(փառատոն), քաղաք(ամրոց), յոթից(ութ), փայել(փայփայել)
- 2) մեն(մենակ), մերթ(մերթ), համով(հոտով), հույն(պարսկական)
- 3) հյուսիս(արևելք), հլու(հնազանդ), դեմ(հանդիման), ուրախ(զվարթ)
- 4) ոլոր(մոլոր), ոչ(օրինական), ներկա(բացակա), շատից(քչից)

3 Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների ոչ բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ, ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,
- 2) ՆԵՐՁԻՆ ԹԱԼԻՆ, ՆԵՐՍԵՍ ԵՐՐՈՐԴ ՏԱՅԵՑԻ, ՌՈՒՍԱՍԱՆԻ ԴԱԾՆՈՒԹՅՈՒՆ,
- 3) ՆՅՈՒ ԶԵՐՍԻ, ԴԱՎԻԹ ԱՆՀՈՂ, ՎԱՆ ՌԵՅՆ, ՎԵՐԻՆ ԴՎԻՆ
- 4) ՍԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ԻՍԼԱՍՍԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ, ՍԱՏԹԵՇՈՍ ՌԻՌԱՅՈՒՅՑԻ, ՆՈՐ ԶՈՒՇԱ

4 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի թ-ն ճիշտ տեղադրված:

- 1) միս(թ)րճվել, քն(թ)նվել
- 2) հանգ(թ)նել, կոք(թ)նել
- 3) ձեռ(թ)նտու, հազն(թ)վել
- 4) խնդ(թ)րել, սպ(թ)րդել

5 Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված բառի *այլ* արմատը մյուսներից տարբեր իմաստ արտահայտում:

- 1) Այդպես էլ ծնվեց մեկը նրանցից,
Ծնվեց նա՝ **Այլ** մի՝ Մաշտոց անունով:
- 2) Ես գրում եմ բրուտների **այլի** մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պտտեցնում է փայտե չարխի կլոր տախտակը:
- 3) Եվ մուրք **այլերից** մամոռու ժայռերի,
Թափուտ ծնակի լրին խորքերից
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
Արձագանքն ահա լսում եմ նորից:
- 4) Կամ ինչպես քաջքերն **այլերի** մթնից,
Երբ նայում է մարդ քարափի զիսից
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խարում են, կանչում ծանոթ ձայներով...

6 Ο՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:

- 1) վերջնագիծ, քննություն, լսափող, նստարան
- 2) հնձվոր, ուսուցիչ, կավճոտ, սուզանավ
- 3) լրջախոհ, իջևան, ուղեկից, ակնդետ
- 4) գետնաքարշ, գիտնական, օրինապահ, անխուսափ

7 Ο՞ր նախադասության մեջ պատճառական բայ չկա:

- 1) Սիանգամից վերացան իր սերնդակիցների թյուր պատկերացումներն աշխարհի և նրա կառուցվածքի մասին:
- 2) Նա միաժամանակ ցանկացել է մանուկներին սովորել տալ հայոց այբուբենը՝ նրա ամեն մի հերթական տառով սկսելով իր ոտանափորի տները:
- 3) Հատկապես կիլիկյան գրչատների ձեռագրերը շլացնում էին իրենց ճոխությամբ՝ երբեք, սակայն, չխախտելով չափի սահմանագիծը:
- 4) Ընորհալին նորոգեց ու թարմացրեց ինչպես գրականությունը, այնպես էլ երաժշտական արվեստը:

8 Ο՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ակնոցի տակից աչքերը հառնեց դեմ դիմաց նստածին:
- 2) Ուսուցչուի դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներկուն աշակերտներին:
- 3) Ակուբներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց ականակիր խավարի մեջ:
- 4) Դատավճռով նախատեսված էր ամբողջ գույքի բռնագրավում:

9 Ο՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) լերկ - բուսականությունից գուրկ, գայթել - ոտքը սահել
- 2) գրաստ - բեռնակիր կենդանի, երախայրիք - առաջին պտուղ
- 3) սնգույր - երեսը ներկելու քսուք, ակնակապիճ - աչքի խոռոչ
- 4) զզլոց - սեղանի դարակ, դարավանդ - հիմ դարերից ավանդված

10 Ο՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում աներքին հոլովման:

- 1) արյուն, սուրանկյուն, աշուն
- 2) մականուն, հենասյուն, ձյուն
- 3) շրջյուն, ծանրություն, դերանուն
- 4) ջրշուն, գալուստ, փոստատուն

11 Ο՞ր տարբերակում է դերանունը ճիշտ հոլովաճեռվ գործածված:

- 1) Մեր մոտից մինչև այդ գյուղը ոտքի ճանապարհ է:
- 2) Նա դեռ իրեն օրում վիշտ ու տառապանք չէր տեսել:
- 3) Սինչև լեռնագագաթը իմ հետ ոչ ոք չբարձրացավ:
- 4) Ես քո վրա հույս չեմ դնում:

12 Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ախտարհման*:

- 1) ասաց, բարձրացի՛ր, դողաց
- 2) հուսանք, ծիծաղել եմ, վշշում է
- 3) մնացինք, հավատալ, խոսում եմ
- 4) եկավ, հասկացել եմ, դարձի՛ր

13 Ո՞ր բառը որ բացատրությանն է համապատասխանում:

- | | |
|-------------|-------------|
| ա. հածել | 1. դեգերել |
| բ. հեծել | 2. ձի նստել |
| գ. հեծկլտալ | 3. տառապել |
| դ. հեծնել | 4. հեկեկալ |

- 1) ա-1, բ-3, գ- 4, դ-2
- 2) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 3) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 4) ա-1, բ-2, գ-3, դ-4

14 Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց հոգնակին կազմվում է *-ներ* վերջավորությամբ:

1. խորագիր, 2. շտար, 3. ոտնաձայն, 4. ջրաչափ, 5. հետախույզ, 6. մրցավար,
7. գրավատոն, 8. հորոքույր, 9. բաղաձայն

- 1) 1, 4, 5, 7, 9
- 2) 2, 3, 4, 7, 8
- 3) 1, 2, 3, 7, 8
- 4) 2, 4, 5, 6, 9

15 Փակագծերում գրված բայերը տրված են ուղիղ ձևերով: Ո՞ր տարբերակում է սխալ դրված բայաձևը, որով բայը պիտի հանդես գա տվյալ տեղում:

Համուց հնձանի դռնակը մեղմ ճռճչում էր, և մաշված դուռը դողդոց (երգել) մի հիմ երգ: Եթե արևը (խոնարիկել) դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար (մնալ) այդ դիրքով և չէր հագենա մրգերը քաղած և արդեն դեղնատ ծառերի սոսափից: Ծոտով կիշնի ճմեռ, և ո՞վ զիտի, բացվող գարնանը նորից ի՞նքը (բանալ) այզու դուռը, թե՞ մի ուրիշ ձեռք:

- 1) բանալ – պիտի բանա
- 2) խոնարիկել – խոնարիկեց
- 3) մնալ – կմնար
- 4) երգել – երգում էր

16 Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Ասում են՝ հարյուրավոր տարիներ առաջ մի աշխարհ կար՝ տարագույն ծաղիկներով, ոսկերև ու թրթուն թիթեռներով, կարկաչուն գետերով:
- 2) Չնայած իշխանի՝ քրտինքի մեջ կորած նժույզը հոգնած էր, իսկ ճանապարհը՝ զարիվեր, այնուամենայնիվ նա անընդհատ շտապեցնում էր խեղճ կենդանուն, որպեսզի ամբող հասնի մի քանի վայրկյան առաջ:
- 3) Այդուեղ էր և նշանավոր պալատական բանաստեղծը, որը երգելով Ֆաթիմի հաղթանակներն ու փառահեղ գործերը՝ արժանացել էր նրա ջերմ համակրանքին:
- 4) Մտածեցի՝ նամակը տիկին Արաքսյայից է (ես նրան նամակ էի գրել), ու հաջտապ բացեցի նկարազարդ ծրարը, որ կարդամ գրությունը:

17 Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Դարերը գլորվում էին դարերի հետևից, ամպերը՝ Կովկասի ճակատների վրայով:


- 1) ինչպես
- 2) հենց որ
- 3) սակայն
- 4) քանզի

18 Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Խնդրի լուծումը կախված է երկու անձնավորություններից:
- 2) Նա համբերությամբ սպասում էր ամբողը եզերող պարսպի երկաթյա դարպասներից մեկի բացվելուն:
- 3) Սի՞թե ես հանցագործ եմ, որ հսկում ես բոլոր քայլերիս:
- 4) Հայերը թշնամու դեմ կովում լիակատար հաղթանակ տարան:

19 Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Նա երջանկությունից անակնկալի եկավ ու ապշեց, գրեթե ցմծաց, երբ մի օր հանկարծ զգաց, որ կարողանում է թղթի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծել, որոնք շատ նման են լինում բնորդներին:



20 Տրված բայաձևերից որո՞նք են դրված ապահով ժամանակով:

1. չուտենք, 2. կպարի, 3. արժեմ, 4. երգիր, 5. սիստի ժպտար, 6. զրեմ, 7. զրելու էի,
8. զգալու է

- 1) 2, 3, 6, 7, 8
- 2) 1, 2, 4, 6, 8
- 3) 2, 3, 4, 5, 7
- 4) 1, 3, 4, 5, 7

21 Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

....., ամեն ինչ ներկայացնում էր առասպելական ասացողի երևակայությամբ:

- 1) Չնայած որևէ բան էր պատմում
- 2) Երբ որևէ բան էր պատմում
- 3) Որևէ բան պատմելու ժամանակ
- 4) Որևէ բան պատմելիս

22 Ո՞ր միտքը չի բխում տեքստի բովանդակությունից:

Տարածության ճշգրիտ չափումները միշտ կարևորվել են: Ակզրնապես որպես չափման միավորներ օգտագործվել են ոտնաչափը (ոտնահետքերի միջև եղած հեռավորությունը), կանգունը (արմունկից մինչև միջնամատի ծայրի չափը) և այլն: Տարածության չափման անհրաժեշտությունը մեծապես կապված է հողագործության, մասնավորապես՝ հողաբանաման հետ: Հողագործը պետք է իմանար՝ որքան է իր հողը, որքան սերմացու կապահանջվի ցանքսի համար, իր կտորն ավելի փոքր չէ, քան հասանելի է իրեն և այլն: Ակզրնական շրջանում ոտնաչափերով չափվող հողակտորներն ակնհայտորեն ամեավասար են, քանի որ չափողի հասակից կախված՝ ոտնաչափը ևս կարող էր տարրեր լինել: Բավական երկար ժամանակ չափման ճշգրտության խնդիրը լուծել է եզրակացնելով, որն ուներ տվյալ ժամանակ իշխող թագավորի բազկի երկարությունը: Նրա գրանիտե բնօրինակը պահպում էր պալատում և ուներ 524 մմ երկարություն՝ բաժանված 28 մասերի: Թագավորական կանգունի փայտն պատճենները տարածված են երկրով մեկ, և դրանցով չափումներ են կատարվում մ.թ.ա. 3000-ից մինչև մ.թ.ա. 600-ականները:

1799-ին ֆրանսիացի հեղափոխականներն ստեղծեցին մետրը, որը կանգունի պես բազմացվեց և տարածվեց աշխարհում: Չափման այս միավորի հիմքում Հյուսիսային բևեռից մինչև հասարակածն ընկած հեռավորության 10 միլիոններորդ մասն էր ընկած:

Արեգակնային համակարգում չափումներ իրականացնելու համար չափման միավոր ընդունվեց Երկրից Արեգակ ընկած միջին հեռավորությունը:

- 1) Տարածության չափման առաջին կայուն նմուշը ստեղծվել է մի թագավորի մարմնամասի չափով:
- 2) Եզրակացները չափման համար ընտրեցին կանգունը, քանի որ համարում էին, որ մարդու բազուկի երկարությունը առավել հստակ միավոր է, քան ոտնաչափը:
- 3) Երկրից Արեգակ ընկած հեռավորությունը հաստատուն չէ:
- 4) Գոյություն ունեցող չափագրման միավորների առաջացման հիմնական դրդապատճառներից մեկը հողագործության հետ կապված խնդիրներն էին:

23 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից բերված հատված չկա:**

- «Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նոյյան աննկատ, ինչպես մի զիշերում բացվում է մուգ մանիշակը»:
- «Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքին առաջ, և ես ճգնում էի իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ես նայեցի, թէ՞ միայն ինձ թվաց»:
- «Ծով կար ճրա մտքում, և այդ ծովը ափ էր շարտում մերք սև թավիշե զիխարկով զլուխ՝ մազերը կարծ կտրած, մերք երկարազգեստ մի կնոջ՝ թիկունքին երկար ծամեր, մերք քարե քանդակներ»:

1) «Ալիական մանուշակ»

2) «Սիրիավ»

3) «Խոնարհ աղջիկը»

4) «Արևածոր»

24 **Տրված քարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

- Ինչ որ իրեն պետք էր լինում, նա այդպես կատակով վերցնում էր:
Իրեն պետք եղածը նա այդպես կատակով վերցնում էր:
- Նա հետևում էր, թե ինչպես է աղջիկը շշերը դասավորում սփոռոցի վրա:
Նա հետևում էր շշերը սփոռոցի վրա դասավորող աղջկան:
- Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:
Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:
- Եթե հեռանալը հեշտ լիներ, Գրիգորյանը վաղուց հեռացած կլիմեր գյուղից:
Գյուղից հեռանալը հեշտ լինելու դեպքում Գրիգորյանը վաղուց հեռացած կլիմեր:

25 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

- Թագավորը իր հրովարտակում ուտելու համար օգտագործվող մսերի թվարկումը սկսում է արգելվածներից, որոնց մեջ էին բոլոր սողունները:
- Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
- Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
- Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտակները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

1) 4, 2, 3, 1

2) 4, 3, 1, 2

3) 1, 3, 2, 4

4) 1, 3, 4, 2

26 **Ի՞նչ երազ է տեսնում Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հերոս Թաքուլ իշխանը մատնության զիշերը:**

- Ցին ու ազոավ լցվել են Թմկաբերդ:
- Վիշապ օձը փաթաթվել է բերդին:
- Նարիկ շահը սպանում է իրեն՝ Թաքուլին:
- Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:

27 Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:

Մրտիս դառնահեծ հառաջանքների
Վայն ու ողբաձայն աղաղակները
Վերընձայում եմ քեզ, ո՞վ գաղտնատես,
Եվ իմ սասանված մտքի ճենճերող
Իղձերի պսուղ նվերն այս, դրած
Անձս տոշորող թախծի կրակին,
Կամքիս բուրվառով առարում եմ քեզ:

- 1) արևմտահայերենով
- 2) արևելահայերենով
- 3) միջին հայերենով
- 4) գրաբարով

28 Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Տանտերը, որի ազգանունը փողոցի շրադրան պղնձե տախտակի վրա փորագրված էր՝ Դավիթ Ֆոմիչ Աղամիրով, մոտ 40–50 տարեկան տղամարդ էր՝ խիստ ջղուտ, կարծես բրոնզից ձուլված դեմքով, սպիտակախառն կոշտ մազերով և սրածայր կարճ մորուրով»:

- 1) «Ալպիական մանուշակ» (Ա. Բակունից)
- 2) «Քառո» (Ա. Շիրվանզադե)
- 3) «Նեղ օրերից մեկը» (Նար-Ղու)
- 4) «Գիքոր» (Հ. Թումանյան)

29 Ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բոլոր այն պնդումների համարները, որոնք համապատասխանում են Հ. Մաքլուսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությանը:

1. Մայր ձին բնագդով վտանգ էր զգացել այն ժամանակ, երբ դեռ թշնամու՝ գայլի ո՞չ հոտս էր զգացվում հովտում, ո՞չ ձայնն էր լսվում:
2. Գայլի կրիվը եսասիրություն էր, իսկ մայր ձիունը՝ անձնազոհություն, քանի որ գայլը կրվում էր իր ստամոքսի համար, իսկ ձին՝ իր ձագուկի:
3. Զգալով, որ շունչը փշում է, մայր ձին մի կողմ է վանում կերակրվելու եկած իր քուրակին և հրաժարվում է կաթ տալուց:
4. Փորբիկ հովիվը զարմանում է, թե շներն ինչու այդպես արագ թափով պոկվեցին տեղից ու վազեցին դեպի կանաչ հովիտը, քանի որ ինքը գայլի ու ձիու կրիվը չէր տեսել:
5. Շների հայտնվելուց հետո գայլը անմիջապես չի նահանջում և չի հրաժարվում պայքարից, շարունակում է կրիվը արդեն շների դեմ:
6. Կանաչ դաշտում կրվի տեղը՝ սև շրջանակը, տարիների ընթացքում լցվում է կանաչով ու կորչում, և կրվի միակ հետքը մնում է քուռակի ոտքի սպին:

- 1) 1, 5, 6
- 2) 2, 3, 5
- 3) 2, 4, 6
- 4) 1, 3, 4

30 Տրված հատվածներից ո՞րն է Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքից:

- 1) Ամսի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փրփրում.
Այս, իմ ազիզ յարն է լալի
Հոնզուր-հոնզուր էն սարում:
- 2) Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն ահա փռած տիրաբար՝
Թոշում է հոգիս, թռչում դեալի տուն:
- 3) Զմուն մի գիշեր կար մի հարսանիք,
Հրճում էր անզուապ ամբոխը գյուղի.
Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
- 4) Ու նրանց հետ՝ ցող արցունքով
Լցված սրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տիսուր սյուքով
Հառաչեցին էն գիշեր:

31 Հ. Սահյանի «Անունդ տալիս» բանաստեղծության մեջ նշվածներից որի՞ մասին չի հիշատակվում:

- 1) հեռվում ուշացած ինչ-որ ձիերի դոփյուն
- 2) թեքված մի մատուռ ու բերդի տեղահան մի դուռ
- 3) քարափի կանաչ ափի մեջ թրթռացող երկնքի մի շերտ
- 4) արևոտ մի սար՝ ճակատին ձյունի պատառիկ

32 Վ. Տերյանի բանաստեղծությունների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) «Fatum» բանաստեղծության մեջ սիրող սրտերը համեմատվում են երկնքի աստղերի հետ, որոնք թեպետ հեռու են իրարից, բայց միշտ կարոտավառ երազում են իրար:
- 2) «Որպես Լաերտի որդին...» բանաստեղծության մեջ հեղինակն իրեն համեմատում է երկար թափառումներից հետո հայրենիք վերադառնող հոմերոսյան հերոսի հետ:
- 3) «Հրաժեշտի գաղել»-ում բանաստեղծը տիսուրյամբ հրաժեշտ է տալիս իր սիրած էակին, որից պետք է որոշ ժամանակով բաժանվի:
- 4) «Մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին...» բանաստեղծության մեջ նշում է, որ ինչպես մեր Արարատ լեռն է տեսել հազար ձյուն, այնպես էլ մեր ժողովրդի համար նոր չեն դավան ու դառնությունը:

33 Ո՞ր նախադասություններում փոխարերական իմաստով գործածված բառ կա:

1. Չուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ, Գարուն, ամեն տեղ նոր կյանք ես վառել:
2. Նայում եմ, մինչև որ անզոր Գլուխս ծնկիդ է թեքվում:
3. Մենք կժպտանք, զո՞հ կժպտանք մեռնելիս, Որ երազում երազեցինք ու անցանք:
4. Մի զարմանալի թախծոտ կյանք էր կանաչում դեմք:
5. Կարկաչակոս աղբյուրն այնտեղ Թափալում էր մարգարիտ:

34 Տրված բառաշաբթում որո՞նք են գալ բառի բառաձևեր:

1. գայինք, 2. կգնան, 3. եկավ, 4. գալիս, 5. գալուստ, 6. եկ, 7. չեմ գա, 8. պետք է գար

35 Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:

1. Թագուհու՝ երփնավաս քարերից կերտված բարեզարդ առանձնարանը լուսավորվելով՝ երևան հանեց հնամենի արվեստի նրբաճաշակ պերճանքը:
2. -Մայր Սեղա,- լուրջունը խախտեց թագուհին,- հիշո՞ւմ ես՝ մեկ-երկու ժամ առաջ հովանոցում ասացիր, թե վաղուց հայտնի է քեզ՝ ինչ վիշտ է կրծում իմ սիրտը:
3. Թեպետ այդ եզակի կառույցը վեց հարյուրից յոթ հարյուր տարեկան է, սակայն, այսօր էլ հիացնում է ինքնատիպ կառուցողական արվեստով:
4. Կամարյանը, հանկարծակիի եկած, մի վայրկյան մնաց անխոս, ապա նորից սկսեց նայել շուրջը՝ տեսնելու այն, ինչ որ գյուղացին «գյուղ» էր անվանում:
5. Վերջինս տան աղյուսն պատին հենելով ձեռքի փողիսը՝ անշտապ մոտեցավ հյուրին՝ քաղցրաժպիտ ողջունելով և տուն հրավիրելով նրան:

36 Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունավորվություն կա:

1. լրատվական, 2. գրչատուփ, 3. մանրախնդրություն, 4. դստրիկ, 5. թռչուն,
6. հեռադիտակ, 7. ատենադպիր, 8. գնացուցակ

37 Ո՞ր նախադասություններում վերաբերական կա:

1. Շողացին, ժպտացին, էլ չկան, Էլ չկան պատրանքները սիրուն:
2. Գուցե ես լամ բախտիդ համար, իմ անգի՞ն:
3. Մի՞թե վերջին պոետն եմ ես:
4. Արդյոք հիշո՞ւմ ես. անտառ էր, առու:

38 Ո՞ր շարքերի բոլոր բառերն են դերանուններ:

1. որեկիցե, ուր, այնչափ, ինքը
2. մյուս, որոշ, իրար, ո՞մն
3. ոչինչ, ոչ ոք, ոչ, ոչ մի
4. նույնիսկ, նույնքան, սույն, նույնպիսի
5. նա, այն, այլ, այլն
6. քանի, քանիերորդ, քանի որ, մի քանի

39 Ծարքերից քանիս՞մ կա այնպիսի բառ, որը հոգմակի կազմելիս չի հնչյունավորվում:

- վարդաջուր, թիմ, երկիր, սալորաչիր
- կայսր, ծրագիր, բույն, սիրտ
- գինետուն, տուփ, ազդր, քուրմ
- ձուկ, վիհ, տեսոր, խաղաթուղթ
- շիկամուկ, վագր, քաղաքադուռ, ձիրք

40 Բառագույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից:

ալևոր-ալեկոծ, ակնածել-պատկառել, եգիպտացորեն-սիմինդր, սմբուկ-ճակնդեղ, տարտամ-խրթին, անստույգ-թույր, երբեմնի-ժամանակ առ ժամանակ, բնորոշ-հատկանշական

41 Տրված սյունակների բառերից քանի՞սն են սխալ տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների:

Նյութական իմաստ արտահայտող	Քերականական իմաստ արտահայտող	Վերաբերմունքային իմաստ արտահայտող
մասին	հանուն	մանավանդ
միտք անել	փոխանակում	խշխոց
ինչպիսի	վերստին	ուր
	որևէ	վահ

42 Պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:

Թղթից շինած ծաղիկների պես հիվանդուտ,
Խորախտավոր ստեղմերի պես ոռյալի,
Փոշուց կերած նկարների նման անթուվ,
Որպես մեռած զեղեցկուհու մի հայելի-
Հոգիս տիկրել է անքարքառ ու չգիտի՝
Ինչո՞ւ է օրմ իրիկնամում ու լուսամում-
Երբ ոչ մի լույս դրսից ընկած ճառագայթի
Չի՝ ամորում նրա կարոտը անանուն:

հանգավորում, համեմատություն, մակրիր, շրջադասություն, չափազանցություն

43 Նախադասություններից քանիս՞ւմ ուղիղ խնդիր կա:

- Ո՞ն զլիսի վերև ծածանվող ամպի թափշյա ստվերով Սրբի՛ր ճակատիդ քրտինքը մաքուր:
- Ես կզամ, կնատեմ հողիդ, Եվ հողդ զորանալ կտա, Ամեն մի քարդ ինձ կառնի, Մտքիս մեջ խորանալ կտա:
- Երբ հոգնում էին օրվա հոգսերից, Փաթաթվում էին մի կարիլ մութով, Երկինքներն էին մտնում երազի Եվ հատիկ-հատիկ աստղ էին ուտում:
- Հոգնել եմ հետ նայելուց. Դեռ աստղեր կան առջևում, Որոնք կարող են շողալ Իմ աշքարաց աշքերում:

44 Ընդգծվածներից քանի՞սն են գերադաս նախադասություն:

- Ով էր դա՝ ոչ ոք չէր կռահում, որովհետև դիմակալի տակ դժվար էր ճանաչել նրան:
- Երբ վրանները հավաքեցին, և ժողովուրդը ուրիշ երկրների ճամփան բռնեց, Մարգարն էլ շալակեց մնացած կապոցները, ու ճամփա ընկան:
- Երբ հեռվից տեսավ մոտեցող նավը, նա զօաց, որ հոգին փոքրոկվում է, որ ինքն այնքան ուրախ չէ, որքան հուզված:
- Սի շարաթ էր՝ անձրևները դադարել էին, և մքնուրուր տոզորվել էր զարնան արքեցուցիչ բույրով:

45 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել **Ճիշտ է, Սխալ է, Չգիտես** տարրերակներից որևէ մեկը:

1. Ժամանակի պարագան կարող է արտահայտվել գոյականի գործիական հոլովով:
2. **Համար** կապով չի կարող ձևավորվել պատճառի պարագա:
3. Չափ ու քանակի պարագան ձևավորվում է միայն չափ ու քանակի մակրայներով:
4. Հիմունքի պարագան ձևավորվում է միայն կապային կառույցով:
5. Զեի պարագան կարող է արտահայտվել ոչ միայն ձևի մակրայներով, այլև գոյականով, դերանունով և այլն:
6. **Մայթերն ամրողովին քրօվել էին անձրկից:** Այս նախադասության մեջ **անձրկից** բառը պատճառի պարագա է:

Բ մակարդակ

46 Համարակալված բառերում և բառաձներում բաց թողած տառերը
(տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

1. հասարակա-ային երկիր, 2. եղնիկների խայ-ալլ, 3. կարկաչ-ն առվակ, 4. Ա-քամար կղզի, 5. աչքի կո-, 6. ա- ու ահյակ, 7. աշխարհի շորս ծա-երը, 8. Սոֆ- մայրաքաղաք:

- 1) 2-ս, 3-յու, 5-պ, 7-գ
- 2) 1-ծ, 4-դ, 6-չ, 8-իա
- 3) 3-ու, 5-պ, 7-գ, 8-իա
- 4) 1-ծ, 2-ք, 4-դ, 6-ջ

47 Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:

- 1) Π-Թ-1009
- 2) SCQ-4560
- 3) ΠՀ-670
- 4) ՆԽԴ-444

48 Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) բուժիչ-ախտածին, նոսր-խիտ, կարծրատիպ-ազատախտի
- 2) նշանակալի-չնշին, բերկրել-տրտմել, խելամիտ-անկշռադատ
- 3) շնորհաշատ-տաղանդազուրկ, տիվ-ցայգ, պիղծ-սուրբ
- 4) գիտուն-թերուս, օրինել-բանադրել, գաղտնապահ-բացքերան

49 Ո՞ր տարրերակում ստորադաս նախադասությունը գոյականական անդամի լրացում չէ:

- 1) Այն օրից, երբ մենք բաժանվեցինք, ես այլս չտեսա նրան:
- 2) Եկեղեցին բաց լինելու դեպքում պրոֆեսորը անպայման ներս կմտներ, լուս կխոնկար սրբերից ու աստվածներից լրված տաճարում, որտեղ մի ժամանակ երգել էին հրեշտակներ:
- 3) Ես միշտ էլ բարձր եմ դասում նրանց, ովքեր իրենց անձը հարգել գիտեն:
- 4) Ես միշտ իմ սրտում պահում եմ նրա անունը, ով գուցե ինձ բնավ էլ չի հիշում:

50 Ո՞ր խոսքի մասով արտահայտված որոշիչ չկա տրված հատվածներում:

- Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ:
- Որ ծանրորեն օրվա մի օր արթնանում ես Եվ իմացած երկրորդ լեզուն մոռանում ես բոլորովին:
- Ասում են՝ իբր կապույտի վրա Չեն նստում ճանձեր: Լսո՞ւմ ես, Մարիամ, Ինձ ներս ու դրսից կապո՞ւյտ հազցրու:

- 1) ածականով
- 2) թվականով
- 3) բայով
- 4) դերանունով

51 Ո՞ր տարրերակում բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Եվ առավել լավ չէ՝ արդյոք, Որ մարդու ոտքը սայթաքի, Քան թե լեզուն:
- 2) Չե՞ս զգում արդյոք, Որ ապատամբած քո թերի տակ Մենակությունն է ճիշել ինքն իրեն:
- 3) Իսկ շուրթերիս, փակ շուրթերիս ձորի միջով Սի ժպիտ է անվերջ սահում:
- 4) Եվ դու բնավ իմ այս խոսքից մի՛ վշտանա, Այլ մտածի՛ր, Թե ջրհորի մութ խորության շափման համար Իր սեփական մանկանն ո՞վ է ջրհոր նետում:

52 Նախադասության անդամների ձևաբանական վերլուծության տարրերակներից որո՞ւմ սխալ չկա:

Հասկանալի էր, որ նման պայմաններում ինձ տրված չէր հանգիստ հոգով զրադվել իմ գործով. զգում էի, որ նյարդերս սկսում էին բողոքել, բացի դրանից, օրիորդը աստիճանաբար անտանելի էր դառնում ինձ համար:

- 1) **դառնում** էր – պակասավոր բայ, **գործով** – գոյական, **տրված** – հարակատար դերբայ
- 2) **զգում** էի – ներգործական սեռի բայ, **բացի** – կապ, երկդրություն, **նման** – ածական
- 3) **աստիճանաբար** – վերաբերական, **համար** – կապ, հետադրություն, **նյարդերս** – ստացական հոգով գոյական
- 4) **ինձ** – դերանուն, սեռական հոլով, **զրադվել** – անորոշ դերբայ, **հանգիստ** – ածական

53 Ո՞ր տարրերակում է ընդգծված անկանոն բայը տվյալ ձևում անկանոնություն դրսերել:

- 1) Ինչ էլ **լինի**, կզամ, չկանչես էլ կզամ:
- 2) Այդ թռչունների անունը **տայիս** միշտ պատկերացնում ենք արևադարձային ճոխս մի բնապատկեր:
- 3) Ամբողջ օրն անցկացրեց փոքրիկ աղջկա հետ. ոչ մի րոպե **չքողեց** նրան մենակ:
- 4) Եվ ո՞վ **կասի**՝ ինչու ես դու, և ո՞վ կասի, թե ուր հասար:

54 Ո՞ր նախադասության մեջ կապ չկա:

- 1) Չիմացա՝ ինչպես ճաշեցի, որովհետև ինձ շատ էր հետաքրքրում այն տեսակցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ:
- 2) Նա իսկույն բաժանվեց ինձնից այնքան ուրախ ու հանգստացած, որ կարծես այլևս ոչ մի դժբախտություն չէր անհանգստացնում իրեն:
- 3) Նա, ըստ այդ որոշման, պետք է հանդիպեր նրան որևէ չեզոք տեղում և հասցներ ազարակ:
- 4) Բայց սովորաբար նա ինձ մոտ է գիշերում. այս երեկոն եթե վաղ գա, հենց այս գիշերվա գնացրով կճանապարհեն:

55 Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ չկա:

- 1) Այստեղ նրանք ունեին բավական մեծ քանակությամբ նավքահորեր, երկու հանք, մի ահազին նավթագործարան:
- 2) Արդեն մի քանի տարի է՝ նա մեզ մոտ է ծառայում:
- 3) Նա պետք է հուսա, որ իր երազանքները կիրականանան:
- 4) Նա իր մեջ կրում էր այն ամենը, ինչ թելադրում էր ժամանակի ոգին:

56 Ο՞ր տարրերակում է ուղղակի խոսքը ճիշտ փոխակերպված:

- 1) *Մնակվայում մի քամի անգամ հանդիպելով Տարկովսկու հորը՝ քիչ է մնացել՝ մոտենամ ու ասեմ.*
- Ես Զեր որդի Անդրեյին ճանաչում եմ, ես Անդրեյի տաղանդի երկրպագուն եմ:
Մուկվայում մի քանի անգամ հանդիպելով Տարկովսկու հորը՝ քիչ է մնացել՝ մոտենամ ու ասեմ, որ ես իր որդի Անդրեյին ճանաչում եմ, ես Անդրեյի տաղանդի երկրպագուն եմ:
- 2) - Եթե ձեր ծնողները շատ սիրելուց ձեզ կուոք են դարձրել, բարի՝ եղեք նրանց հարգել,- ասում էր ուսուցիչը մեզ:
Ուսուցիչը մեզ ասում էր, որ եթե մեր ծնողները շատ սիրելուց մեզ կուոք են դարձրել, ուրեմն մենք պիտի բարի լինենք նրանց հարգել:
- 3) - Եթե ձեր հանձնաժողովը չընդունի իմ սկզբունքները, ես շարունակելու եմ իմ գործը,- հանգիստ պատասխանեց Հակոբյանը ներկաներին:
Հակոբյանը հանգիստ պատասխանեց ներկաներին, որ եթե իրենց հանձնաժողովը չընդունեց իր սկզբունքները, ինքը շարունակելու է իր գործը:
- 4) - *Սենք այնքան մտերմացել ենք, Սե՞դա, որ ես ազատ կարող եմ իմ կարծիքը հայտնել քեզ,- ասաց իշխանը Ժպտալով:*
Իշխանը Ժպտալով ասաց Սեդային, որ իրենք այնքան մտերմացել են, որ նա ազատ կարող է իր կարծիքը հայտնել նրան:

57 Ο՞ր շարքում դերբայական ճնի սխալ կազմություն չկա:

- 1) ճատեցնել, սառչած, ուրախացող, խմեցնել
- 2) փախչելիս, սառչող, կպած, աշխատացնել
- 3) փրկված, շփոթեցնել, կառչող, խարճվել
- 4) քոչելիս, չեղած, դիպչող, տուժած

58 Ο՞ր նախադասության մեջ կապի գործածության կամ հոլովառության սխալ չկա:

- 1) Բոլորը եկել են բացառությամբ բժշկից:
- 2) Զեր առաջարկների հետ անհնար է շհամաձայնել:
- 3) Փոխարեն դաս սովորելու՝ երաժշտություն ես լսում:
- 4) Կատարվածի համար կարելի է միայն ափսոսալ:

59 Ο՞ր տարրերակում են ճիշտ նշված այն բվերը, որոնց տեղում քութ պիտի դրվի:

Այս արգահատելի մարդը(1) Հոհան եպիսկոպոսը ոչ միայն ազահ էր այլ նաև ամիմքնաեր: Պատահում էր(2) զնում էր բազավորի պալատ և իրեն պահում էր(3) ինչպես խեղկատակ(4) չամաշելով իր տարիքից և կոչումից: Չորեքքաթ վազելով(5) ծամածոռություններ անելով ու կենդանիների ծայներ հանելով(6) ծիծաղեցնում էր բազավորին(7) ուղտի պես սողալով նրա ուորելի առջև:

Եվ ուղտի սապատի պես մեջքը ուոցրած(8) վազվում էր սրահում ապա մոտենում բազավորին(9) կրկնում նույն խոսքերը: Իսկ բազավորը կամ իշխանները նրա մեջքին դնում էին կնքված հրովարտակներ(10) իր քերափելով իրենց մեղքերը:

- 1) 1, 2, 4, 6, 7, 8, 10
- 2) 2, 5, 7, 8, 9
- 3) 1, 5, 4, 6, 7, 8, 10
- 4) 2, 3, 4, 6, 10

60 Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Որպես մարդ՝ նա սիրված էր, բայց որպես ղեկավար՝ նրան այնքան էլ չէին ընդունում:
- 2) Ուղեգրի արժեքի մեջ մտնում է նաև նախաճաշն ու ընթրիքը:
- 3) Մարիամը դատեր ու թոռների հետ հաճախ էր լինում թատրոնում:
- 4) Ողջ ժողովուրդը ցնծագին բացականչություններով դիմավորեցին իրենց սպարապետին:

61 Տերսուց դուրս բերված նախադասությունները բաց քողած տեղերում ո՞ր հերթականությամբ է պետք տեղադրել:

Բերդից՝ քարե այդ վիթխարի սնդուկի երկու կողքերից սկսվելով՝ ծուռումուր, հսկա սապատավոր ուղտերի նման դեպի վար՝ դեպի քաղաքն են իջնում քաղաքի երթեմնի պարիսպների հիմիկա մնացողդները: Բայց հիմնա քարե այն հսկա ուղտերի սապատներն են միայն ծուռուիկ բլուրների նման տեղ-տեղ մնացել: Մնացել են հիմնա այն հիմն պարիսպների զարմանք հետքերը միայն: Ամեն մեկը հիմնա մասնապատ մի պատ է կատարյալ, չինացողը կասի՝ ո՞վ է այս բլուրի քարերը հղել, ազնվացրել և մամուռով պատել: Իսկ մի վիթխարի կտորը այդ առասպելական պարիսպի միջն օրս էլ մնացել է քաղաքի միջով անցնող գետի ճիշտ մեջտեղում: Կարծում են՝ կամուրջ է եղել, և համոզված են, որ այդպիսի մի կամուրջ Վարդան զորավարը միայն կարող էր շինել, որովհետև այսօրվա միամիտ նաիրցին այն ամենը, որ մեծ է և զարմանալի, ինչ որ նաիրյան է ու հաղրական, վերագրում է Վարդան Մամիկոնյանին՝ վերջին այդ արքայակերպ նաիրցուն, որի մասին այսօր ամեն մի հասարակ նաիրցի այնքանը միայն գիտե, որ քարեկենդանի հինգաշրթի օրը բոլոր նաիրյան եկեղեցիներում պատարագ է լինում նրա հիշատակիմ: Երգվում է «Լոեց ամպերը», և այդ օրը բոլոր նաիրցիների համար տոն է: Ասում են (և այդ բոլորը գիտեն), որ գետում խեղդվածները զալիս հավաքվում են կամուրջի տակ գտնվող ահռելի վիհերում. վիհի վրա է կանգնած այդ հսկա քարակույտը, ահա թե ինչ: Նրա տակ դատարկ է, բոլորովին դատարկ: Եվ այդ դատարկության վրա, որպես նաիրյան հմամենի զարմանք, եղել է կամուրջը, կախվել է վիհերի վրա ծանր ու հաստատ:

1. Պարիսպի այդ կտորն է ահա, որ կոչվում է հիմնա Վարդանի կամուրջ:
 2. Առաջ, շատ հնում քարե ուղտերի անընդհատ ձգվող մի քարավան է եղել, ամրակուռ մի պարիսպ, որ, բերդից իջնելով, անցնելիս է եղել գետը և ամբողջ քաղաքը իր մեջ առնելով՝ տարիներ շարունակ պաշտպանել է բնակիչներին շարից ու ոստիսից:
 3. Բայց այդ չել, իհարկեն, պատճառը, որ Վարդանի կամուրջը նաիրցիների աշքին դարձել է խորհրդավոր մի հրաշը՝ ահռելի գեղեցկություն:
 4. Մեկն այնտեղ ահա՝ բերդի պատերին կպած, մյուսն այնտեղ՝ գետեզերքին, մեկն է՝ հեռու-հեռուն՝ քաղաքից դուրս:
- 1) 2, 4, 1, 3
 - 2) 4, 1, 2, 3
 - 3) 4, 1, 3, 2
 - 4) 2, 3, 4, 1

62

Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում թերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Ծանր ժամանակներից ի վեր թեև շատ քանի էր փոխվել մեր կյանքում, մայրիկիս սրտում վախ կար վաղվա օրվա հանդեպ:

- 1) քանզի
- 2) ուստի
- 3) ուրեմն
- 4) այնուամենայնիվ

63

Տրված նախադասությունների դերքայական դարձվածների շարահյուսական պաշտոնները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

- | | |
|---|----------------|
| ա. Շուր գալով նա տեսավ իր հետևում կանգնած թշնամուն: | 1. Ենթակա |
| բ. Նոր իմացվեց խմբի՝ արտասահմանից վերադառնալը: | 2. ստորոգելի |
| գ. Օղանավակայանում բարձրախոսվ հայտնեցին ժամանող ինքնարիոի վայրէջք կատարելը: | 3. որոշիչ |
| դ. Նրա ձախողման պատճառը ուսուցչի հանձնարարությունները ժամանակին չկատարելն էր: | 4. ուղիղ խնդիր |
- 1) ա -4, թ -2, զ -3, դ -1
 - 2) ա -3, թ -1, զ -4, դ -2
 - 3) ա-4, թ -2, զ -1, դ -3
 - 4) ա -3, թ -4, զ -1, դ -2

64

Տրված բնութագրումներից ո՞րը 5-րդ դարի հեղինակներից որի ստեղծագործությանն է վերաբերում:

- | | |
|--|----------------------------|
| 1. Կերտված է հայ կրթական, լուսավորչական գործչի առաջին պատմագեղարվեստական կերպարը: | ա. Փավստոս Բուզանդ. |
| 2. Ակսվում է Տրդատ Սեծի մահից և հասնում մինչև 387 թվականը, երբ Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: | բ. Ղազար Փարպեցի. |
| 3. Ընդգրկում է շուրջ հարյուր տարվա պատմություն՝ սկսած Հայաստանի մասնատումից Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: | շ. «Հայոց պատմություն» |
| 4. Ներկայացվում է հայ նախարարական տոհմերի ծագումնաբանությունը: | դ. Կորյուն. «Վարք Մաշտոցի» |
- 1) 1-թ, 2-զ, 3-ա, 4-դ
 - 2) 1-դ, 2-ա, 3-թ, 4-զ
 - 3) 1-զ, 2-դ, 3-ա, 4-թ
 - 4) 1-զ, 2-ա, 3-թ, 4-դ

65 Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Քաղաքի այս թաղամասն ուղղակի անօրինակ ու անկրկնելի էր գեղեցկության ու արվեստի սիրահար Չոհրապը ապշար էր նրա աշխույժ փողոցներով բազմամարդ հրապարակներով:
- 2) Արամի դեմքին մի փունջ ցասում է կուտակվել թվում է նա լցված է ահռելի տենդով ու խոռվքով:
- 3) Ծառայությունից ապօրինի խուսափելու իմ ցանկության մասին ինքնըստինքյան հասկանալի է ոչ մեկին չպատմեցի իսկ այդ օրվա իմ անակնկալ անհետացումը քողարկեցի մի ստահող պատմությամբ:
- 4) Հիշում եմ երբ Վանի արևել կանգնում էր գենիթում փոքր ժամանակ արևն ինձ մեծ շատ մեծ էր թվում հանկարծ ծովից եկող մեղմ այուքը փարվում էր քաղաքին:

66 **Դ. Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ արարողակարգով է դաշինք կնքվում Հորդայի արքայի և հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի միջև՝ ընդդեմ Պարսկաստանի.**

- 1) Դաշինքի կնքման արարողությանը մասնակցում է մեծ խաքանը՝ Աքրլը, որն իր մատանիով վավերացնում է ուխտը:
- 2) Հորդայի արքան և հայոց սպարապետը դաշույնով ծակում են իրենց բազուկները և ձեռքերը խաչելով՝ միմյանց խառնում արյունը:
- 3) Հայոց սպարապետը բավական վարժ ստորագրում է դաշնագրի տակ, իսկ Հորդայի արքան, անգրագետ լինելով, դաշույնով անցք է բացում բթամատի վրա և արյամք վավերացնում դաշինքը:
- 4) Հորդայի արքան բերել է տալիս մի թաս ջուր, և ինքն ու Վարդանը խմում են նույն թասից, այնուհետև երկուսն էլ երդվում են Ավետարանի վրա:

67 Ո՞ր նախադասություններում շարադասության սխալ կա:

1. Ցանկացած մրցույթի միջազգային դաշնամուրային հաղթող գուցե չկարողանա այնպես նվազել Շոպեն, ինչպես Արքուր Փափազյանը:
2. Նա վարակիչ ոգևորությամբ էր պատմում իր ամառանոցի անկրկնելի ափամերձ քնանկարների մասին, արտասովոր իտալական սովորույթների մասին:
3. Ինչն էր նրան մտահոգել գիշերվա այդ ուշ ժամին՝ չկարողացա գուշակել, բայց նրա՝ մեր տուն գալլ նշան էր, որ իմ նկատմամբ ինչ-ինչ կասկածներ ուներ:
4. Աշխարհի սպասվող ըմբշամարտի առաջնությունը, անտարակույս, կգրանցի նոր անուններ, նոր հաղողներ:

Տրված տեքստի համարակալված պարբերություններից որոնցո՞ւմ ավելորդ (նախորդ կամ հաջորդ մտքի և առհասարակ տեքստի հետ չկապվող) նախադասություն կա:

1. Քաղաքի պաշտոնական կենտրոններից ավելի հետաքրքիր և ուշագրավ են, եթե կարելի է այսպես արտահայտվել, «անպաշտոն» կենտրոնները: Թեպետև նրանք, ըստ մեծի մասի, չեն վայելում հանրության կողմից այն խորհրդավոր հարգանքը, որ վիճակվել է պաշտոնական կենտրոններին: Եթե է շինված նախրյան այդ հին քաղաքը՝ աստված ինքը գիտի, բայց ասում են, որ այդ քաղաքը հիմնողները եղել են ին ին նախրյիներ:

2. Բայց ինչո՞վ, ինչո՞վ է պակաս և ինչի՞ համար հասարակական հիմնարկություն չպետք է համարվի թեկուզ հենց, օրինակի համար, եկեղեցական մոմավաճառքի խանութը, որտեղից դուրս ելած բոլոր մոմերը կճշգած են լինում, այո՛, իսկական նախրյան կնիքով: Կրկնում եմ՝ իզուր են միամիտ քաղաքացիք եկեղեցական մոմավաճառքի խանութի վրա աչքի ծայրով նայում. նա կենտրոն է, և որքան էլ ասած չափազանցություն թվա, կարևոր կենտրոն:

3. Բայց որպես մի իսկական «քաղաքական ակումբ» և այն էլ ոչ միայն վարժապետների և հոգաբարձուների, այլև ազգային գործերով բոլոր հետաքրքրվողների համար, որպես այդպիսի ահա մի հասարակական կենտրոն հայտնի է քաղաքում «Լույս» նավթարդյունաբերության ընկերության այդտեղի ներկայացուցչի գրասենյակը: Եկեղեցիներին և ծխական դպրոցներին վերաբերող բոլոր խնդիրներն այդտեղ են արծարծվում: Բայց քաղաքը ուներ մի շարք տեղական իրաշալիքներ:

4. Մոմավաճառքի՝ արտաքինից այդ անշուր խանութը այնպես համեստ պահվել է փողոցի ամենախուզ անկյունում: Էապես այն նշանակալից դերն է խաղում քաղաքի հասարակական կյանքում, ինչ դեր որ խաղում են քաղաքակրթված երկրներում քաղաքական ակումբները:

5. Իսկ խանութների առաջ նատել է նախրցի խանութպանը և ծույլ, անփոյք հորանջելով՝ սպասում է գնորդի: Եվ այդպիսի մի դեր խաղալու համար ամեն հարմարություններ ունի մոմավաճառքի խանութը: Տաք է, քաղաքի կենտրոնում է գտնվում, և որ ամենակարևորն է, ազատ է կողմնակի այցելուներից:

69 Ո՞ր մտքերն են հակասում շարադրանքի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:

Արևի շուրջ պտտվող խոշոր մոլորակները 8-ն են. դրանցից 6-ը, բացի Մերկուրիից ու Վեներայից, ունեն նաև իրենց արբանյակները: Բացի խոշոր մոլորակներից կան և, այսպես կոչված, գաճաճ մոլորակներ, ինչպես նաև այլ փոքր մարմիններ՝ աստղակերպներ և գիսաստղեր, որոնք, ի տարբերություն խոշոր մոլորակների շուրջը պտտվող արբանյակների, պտտվում են Արևի շուրջը:

Պլուտոնը, որ մինչև 2006 թվականը, հակառակ իր փոքր չափերին, խոշոր մոլորակների քին էր դասվում՝ դրանց քանակը հասցնելով 9-ի, ներկայումս գլխավորում է գաճաճ մոլորակների շարքը: Ըստ չափերի՝ նրան հաջորդում է Յերերա գաճաճ մոլորակը, որը 7500 անգամ փոքր է Երկրից իր զանգվածով, իսկ նրա շառավիղը 20 անգամ փոքր է Երկրի շառավղից: Այդ պատճառով էլ շատ փոքր է նրա ծանրության ուժը. եթե Երկիր մոլորակի վրա մարդը կարող է ցատկել միջինը 50 սմ, ապա այդ մոլորակի վրա՝ 16 մետր:

Աստղակերպները ունեն ավելի փոքր չափեր և ոչ կանոնավոր ձևեր՝ ի տարբերություն գաճաճ մոլորակների, որոնք խոշոր մոլորակների նման գնդաձև են: Դրանցից ամենախոշորի՝ Վեստայի վրա, որը մի կողմից կտրված բլիթի տեսք ունի, մարդը հեշտությամբ կցատկի 30 մ՝ անցնելով բարձր բլուրների վրայով: Կան նաև ընդամենը մի քանի տասնյակ մետր շառավիղ ունեցող աստղակերպներ: Կան նաև ավելի փոքրները: Այդպիսի աստղակերպների մակերևույթի վրայից մարդը մինչև անգամ կարող է թռչել հեռանալ բաց տիեզերք, ինչը բացառվում է Երկրի պարագայում:

1. Ներկայում Պլուտոնը չի համարվում այնպիսի մոլորակ, ինչպիսին, օրինակ, Վեներան:
2. Գաճաճ մոլորակները և աստղակերպները պտտվում են Արևի շուրջը:
3. Թեև Վեստան Յերերայից ավելի խոշոր է, սակայն մոլորակ չի համարվում իր տեսքի պատճառով:
4. Որոշ աստղակերպների վրայից, ի տարբերություն Երկրի, մարդը կարող է առանց տիեզերանավի հեռանալ դեպի տիեզերական տարածություն:
5. Աստղակերպները մոլորակների նման կանոնավոր ձև ունեն:

70 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Այսալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Ենթակայական դերբայով արտահայտված դերբայական դարձվածը կարող է լինել հատկացուցիչ:
2. Դերբայական դարձվածը լրացնում է միայն բայական անդամին:
3. Հարակատար դերբայով կազմված որոշիչ դերբայական դարձվածը որոշյալից չի տրոհվում:
4. «Կամարակապ դարպասի մոտ ճատելը պասիս սովորությունն էր:»
նախադասության ենթական արտահայտված է դերբայական դարձվածով:
5. Դերբայական դարձվածը ձևավորում են միայն անկախ դերբայները:
6. Անորոշ դերբայով չի կարող ձևավորվել անջատման անուրակի խնդիր դերբայական դարձված: